ԵԴ1/0586/07/25

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Երևան քաղաքի առաջին ատյանի
ընդհանուր իրավասության քրեական դատարան,
նախագահող դատավոր՝ Տ.Ոսկանյան

Հայաստանի Հանրապետության
վերաքննիչ քրեական դատարան,
նախագահող դատավոր՝ Ա.Նիկողոսյան

20 նոյեմբերի 2026 թվական քաղաք Երևան

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան),

նախագահությամբ՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ԳՐԻԳՈՐՅԱՆԻ
Ա.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ

գրավոր ընթացակարգով քննության առնելով Ջոհրաբ Աղասիի Մխիթարյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2025 թվականի մարտի 6-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Արամյանի հատուկ վերանայման վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Վարույթի դատավարական նախապատմությունը.

1. 2025 թվականի հունվարի 26-ին հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի առկայության հիմքով ձերբակալվել են Զոհրաբ Աղասիի Մխիթարյանը և Արա Աղասու Մխիթարյանը:

Նախաքննության մարմնի կողմից 2025 թվականի հունվարի 27-ին որոշումներ են կայացվել Զ.Մխիթարյանին և Ա.Մխիթարյանին ձերբակալելու մասին՝ հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի առկայության հիմքով:

2025 թվականի հունվարի 27-ին, ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի վարչության Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնում, ՀՀ քրեական օրենսգրքի 393–րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով նախաձեռնվել է թիվ 11115025 քրեական վարույթը:

2. Նույն օրը նախաքննության մարմինը միջնորդություն է ներկայացրել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ Ալինա Յուրիկի Մարտիրոսյանի անվամբ հաշվառված և Զոհրաբ Աղասիի Մխիթարյանի կողմից շահագործվող «Մերսեդես» մակնիշի ** ** *** պետհամարանիշի ավտոմեքենայում 2025 թվականի հունվարի 27-ից մինչև 2025 թվականի հունվարի 29-ը ներառյալ ընկած ժամանակահատվածում խուզարկություն կատարելու թույլտվություն ստանալու վերաբերյալ, որն Առաջին ատյանի դատարանի՝ 2025 թվականի հունվարի 27-ի որոշմամբ մերժվել է:

2. Դատախազ Դ.Թադևոսյանի հատուկ վերանայման վերաքննիչ բողոքի քննության արդյունքում, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2025 թվականի մարտի 6-ի որոշմամբ մերժել է բողոքը՝ Առաջին ատյանի դատարանի որոշումը թողնելով անփոփոխ:

3. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ հատուկ վերանայման վճռաբեկ բողոք է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Արամյանը, որը Վճռաբեկ դատարանի՝ 2025 թվականի մայիսի 13-ի որոշմամբ ընդունվել է վարույթ և սահմանվել է դատական վարույթի իրականացման գրավոր ընթացակարգ:

<u>Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.</u>

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ փաստարկներով.

4. Բողոքաբերը փաստել է, որ Վերաքննիչ դատարանը, անձի սահմանադրական իրավունքի սահմանափակման անհրաժեշտությունը և համաչափությունը հիմնավորող փաստական տվյալների առկայության պայմաններում, օրինական ուժի մեջ է թողել Առաջին ատյանի դատարանի որոշումը, ինչի արդյունքում խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 209–րդ և 234-րդ հոդվածների պահանջները:

4.1. Բողոքի հեղինակը նշել է, որ առկա փաստական տվյալներն առերևույթ վկայում են Զ.Մխիթարյանի կողմից «Մերսեդես» մակնիշի ավտոմեքենայում չպարզված քանակությամբ «Մարիխուանա» տեսակի թմրամիջոց ապօրինի պահելու մասին, ընդ որում՝ ավտոմեքենայում առկա դեղնականաչավուն զանգվածի թմրամիջոց հանդիսանալու վերաբերյալ հայտնել է ավտոմեքենան փաստացի շահագործող անձը՝ Զ.Մխիթարյանը:

Բողոքաբերը նշել է, որ տվյալ դեպքում բարձր է հավանականությունը, որ Զոհրաբ Մխիթարյանի՝ բնակարան հանդիսացող ավտոմեքենայում խուզարկություն կատարելու արդյունքում կարող են հայտնաբերվել և վերցվել ինչպես պարեկային ծառայության աշխատակիցների նկատած «Մարիխուանա» տեսակի թմրամիջոցի պարունակությամբ պոլիէթիլենային տոպրակը, այնպես էլ նշված ավտոմեքենայի այլ հատվածներում թաքցված ենթադրյալ թմրամիջոցի պարունակությամբ այլ փաթեթներ:

Բողոք բերած անձը նաև նշել է, որ մինչդատական վարույթում առանձին քննչական գործողությունների կատարման մարտավարությունը և ժամանակագրական ճշտության գնահատումը դուրս է դատարանի լիազորությունների շրջանակից, մինչդեռ սույն դեպքում ստորադաս դատարանը խուզարկություն կատարելու թույլտվությունը մերժել է այն հիմնավորմամբ, որ վարույթն իրականացնող մարմինը զրկված չէ ավտոմեքենայի ուղևորի նստատեղի դիմացի տեսանելի վայրում առկա դեղնականաչավուն զանգվածով լցված պոլիէթիլենային տոպրակն առգրավելու և համապատասխան վարութային գործողությունների արդյունքում դրա թմրամիջոց հանդիսանալու հանգամանքը պարզելու հնարավորությունից:

4.2. Բացի այդ, բողոքաբերը փաստել է, որ վիճարկվող որոշումը հակասում է Վճռաբեկ դատարանի՝ *Մեսրոպ Թադևոսյանի և Սիրուն Նաջարյանի* գործով 2015 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ԵՇԴ/0073/07/15, *Հովհաննես Շահինյանի* գործով 2023 թվականի հունիսի 22-ի թիվ ԵԴ/0364/07/20 և *Լևոն Հակոբյանի* գործով 2024 թվականի փետրվարի 23-ի թիվ ԵԴ/1206/07/23 որոշումներով արտահայտված իրավական դիրքորոշումներին:

5. Վերոգրյալի հիման վրա, բողոք բերած անձը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2025 թվականի մարտի 6-ի որոշումն ու կայացնել դրան փոխարինող դատական ակտ:

<u>Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

6. Ապացուցողական գործողություն կատարելու միջնորդությամբ նախաքննության մարմինը նշել է հետևյալը. *«(…) 2025 թվականի հունվարի 26-ին՝ (…) ՀՀ ՆԳՆ ոստիկանության ՊԾ ԵՔՎ 2–րդ գումարտակի 3–րդ վաշտի կրտսեր պարեկ Ռ.Աթոյանը, նույն վաշտի հրամանատարի տեղակալ ոստիկանության մայոր Տիգրան Խուդանյանի հետ Երևան քաղաքում 1117 կողային համարի պարեկային ավտոմեքենայով ծառայություն իրականացնելիս ժամը 22:55-ի սահմաններում, Երևան քաղաքի Թամանցիների փողոցում կանգնեցրել են «Մերսեդես» մակնիշի ** ** *** հ/հ ավտոմեքենան, ստուգման նպատակով: Մոտենալով մեքենային նկատել են, որ մեքենայի ուղևորի նստատեղի դիմաց տեսանելի վայրում առկա է պոլիէթիլենային տոպրակ՝ լցված դեղնականաչավուն զանգվածով, որից հետո ժամը 23:00–ին «Մերսեդես» մակնիշի ** ** *** հ/հ ավտոմեքենայով հանդերձ 1119 կարգահամրի՝ նույն գումարտակի ծառայողներ ոստիկանության ավագ լեյտենանտ Ս.Պ.-ի, ոստիկանության ենթասպա Գ.Վ.-ի և ոստիկանության ավագ սերժանտ Ա.Ա.-ի հետ միասին ապօրինի թմրանյութ ձեռք բերելու, պահելու և օգտագործելու հիմնավոր կասկածի առկայության հիմքով ձերբակալել և ոստիկանության Շենգավիթի բաժին են տեղափոխել վարորդին և ուղևորին:*

Ոստիկանության Շենգավիթի բաժնում պարզվել է, որ վերջիններս հանդիսանում են Զոհրաբ Աղասի Միհթարյանը (…) և Արա Աղասու Միհթարյանը (…):

*Ջոհրաբ Միհթարյանը ոստիկանության Շենգավիթի բաժնում հայտարարել է, որ իր կողմից շահագործվող «Մերսեդես» մակնիշի ** ** *** հ/հ ավտոմեքենայի մեջ առկա դեղնականաչավուն զանգվածը «Մարիխուանա» թեսակի թմրամիջոց է, որը գտել է Գյումրի-Երևան մայրուղուց, այն հետագայում գցելու նպատակով:*

(…)

*Նկատի ունենալով, որ հիմքեր կան ենթադրելու, որ Ալինա Յուրիկի Մարտիրոսյանի անվամբ հաշվառված և Ջոհրաբ Աղասիի Միհթարյանի կողմից շահագործվող «Մերսեդես» մակնիշի ** ** *** պետհամարանիշի ավտոմեքենայի մեջ կարող են ապօրինի պահվել թմրամիջոցներ, հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր, դրանց պատրաստուկներ կամ դրանց համարժեք նյութեր (անալոգ) կամ դրանց ածանցյալներ կամ պրեկուրսորներ, որոնք կարող են կարևոր նշանակություն ունենալ քրեական վարույթի համար, բացի այդ ապացուցողական գործողությունից ակնկալվող արդյունքն այլ եղանակով ապահովել անհնար է, ուստի՝ (…) որոշեցի թիվ 11115025 քրեական վարույթով միջնորդություն հարուցել (…) թույլատրելու Ալինա Յուրիկի Մարտիրոսյանի անվամբ հաշվառված և Ջոհրաբ Աղասիի Միհթարյանի կողմից շահագործվող «Մերսեդես» մակնիշի ** ** *** պետհամարանիշի ավտոմեքենայում 2025 թվականի հուվարի 27-ից մինչև 2025 թվականի հունվարի 29-ը ներառյալ ընկած ժամանակահատվածում կատարել խուզարկություն»[1]:*

7. Միջնորդվող ապացուցողական գործողության կատարումն Առաջին ատյանի դատարանը չի թույլատրել հետևյալ պատճառաբանությամբ. *«(…) Վարույթն իրականացնող մարմնի կողմից որևէ փաստ չի ներկայացվել Ջոհրաբ Աղասիի Միհթարյանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 393–րդ հոդվածի 1-ին մասով և ՀՀ քրեական օրենսգրքի 396-րդ հոդվածի 1–ին մասով ենթադրյալ հանցանքներին առնչակցություն ունենալու վերաբերյալ: Միայն այն հանգամանքը, որ վարույթ է նախաձեռնվել ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 1-ին մասի և 396-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հիմք չի կարող հանդիսանալ տրանսպորտային միջոցի խուզարկությունը թույլատրելու համար:*

Դատարանի այս դիրքորոշումը պայմանավորված է այն հանգամանքով, որ նախ որևէ փաստ չի ներկայացվել անձանց մոտից ենթադրյալ թմրամիջոցների չափի,

[1] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 1-ին, թերթեր 3-4:

տեսակի, և ըստ այդ ՀՀ քրեական օրենսգրքի 396-րդ հոդվածի 1-ին մասով ենթադրյալ հանցավոր արարքին Զոհրաբ Աղասիի Միհթարյանի առնչակցության վերաբերյալ, և երկրորդ միջնորդությամբ և կից նյութերով առկա չէ գեթ մեկ փվյալ, որը հնարավորություն կտար ենթադրություն կատարել թմրամիջոցների ապօրինի իրացման հանգամանքի վերաբերյալ:

Ամբողջացնելով վերոգրյալը Դատարանը արձանագրում է, որ միջնորդությանը կից ներկայացված նյութերը բավարար փաստական փվյալներ չեն պարունակում անձի բնակարանում/ավտոմեքենայում խուզարկություն կատարելու միջնորդությունը հիմնավոր համարելու համար, ուստի այն ենթակա է մերժման:

Ընդ որում Դատարանն արձանագրում է, որ վարույթն իրականացնող մարմինը զրկված չէ ավտոմեքենայի ուղևորի նստատեղի դիմաց տեսանելի վայրում առկա պոլիէթիլենային փոպրակը լցված դեղնականաչավուն զանգվածով առգրավելու և համապատասխան վարութային գործողությունների արդյունքում դրա թմրամիջոց հանդիսանալու հանգամանքը, թմրամիջոցի տեսակը պարզելու և ըստ այդ ՀՀ քրեական օրենսգրքի 396–րդ հոդվածի 1–ին մասով ենթադրյալ հանցավոր արարքին Զոհրաբ Աղասիի Միհթարյանի առնչակցության վերաբերյալ փաստական փվյալ ստանալուց հետո, նոր միայն միջնորդություն ներկայացնելու դատարան:

*Դատարանն արձանագրում է, որ քննիչի՝ Ալինա Յուրիկի Մարտիրոսյանի անվամբ հաշվառված և Զոհրաբ Աղասիի Միհթարյանի կողմից շահագործվող «Մերսեդես» ** ** *** հաշվառման համարանիշի տրանսպորտային միջոցում խուզարկության թույլտվություն ստանալու վերաբերյալ միջնորդությունը բավարարելու արդյունքում հնարավոր չէ ապահովել անձի բնակարանի անձեռնմխելիության իրավունքի սահմանափակման և կիրառվող միջոցի ու հետապնդվող նպատակների միջև համամասնության ողջամիտ հարաբերակցության անհրաժեշտությունը: Հակառակ մոտեցումը, կարող է հանգեցնել անձանց իրավունքների անհամարժեք սահմանափակման՝ այդ իրավունքների խախտման (...)»[2]:*

8. Առաջին ատյանի դատարանի որոշման իրավաչափության ստուգման արդյունքում Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ. *«(...) [Քննիչի կողմից ներկայացված՝ Ալինա Յուրիկի Մարտիրոսյանի անվամբ հաշվառված և Զոհրաբ*

[2] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 1-ին, թերթեր 24-28:

*Աղասիի Միսիթարյանի կողմից շահագործվող «Մերսեդես» մակնիշի ** ** *** պետհամարանիշի ավտոմեքենայում խուզարկություն կատարելու միջնորդությունը (խուզարկություն կատարելու անհրաժեշտությունը) բավարար փաստական տվյալներով չի հիմնավորվել, հաշվի առնելով, այն էական հանգամանքը, որ ինչպես իրավացիորեն փաստել է Առաջին ատյանի դատարանը, վարույթն իրականացնող մարմնի կողմից բավարար փաստական տվյալներ չեն ներկայացվել քրեական պատասխանատվություն նախատեսող ենթադրյալ արարքների առկայության վերաբերյալ, իսկ հնարավոր վարչական իրավախախտման բացահայտման նպատակով քրեադատավարական գործիքակազմի օգտագործումն անթույլատրելի է:*

Միևնույն ժամանակ Վերաքննիչ դատարանը, համաձայնելով Առաջին ատյանի դատարանի իրավաչափ հետևությունների հետ, հարկ է համարում արձանագրել, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը հստակ տարբերակել է «խուզարկություն» քննչական գործողությունը «առգրավում» քննչական գործողությունից, և տվյալ դեպքում վարույթն իրականացնող մարմինը զրկված չէ ավտոմեքենայի ուղևորի նստատեղի դիմաց՝ տեսանելի վայրում առկա, դեղնականաչավուն զանգվածով լցված պոլիէթիլենային տոպրակը՝ առգրավելու և համապատասխան վարութային գործողությունների արդյունքում դրա թմրամիջոց հանդիսանալու հանգամանքը պարզելու և ըստ այդմ՝ Զոհրաբ Միսիթարյանի ենթադրյալ հանցավոր արարքին ՀՀ քրեական օրենսգրքի 396-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի հատկանիշների առկայության դեպքում՝ նախնական իրավական գնահատական տալու հնարավորությունից, քանի որ առգրավում քննչական գործողությունն ուղղված է նախևառաջ հայտնի, կոնկրետ տեղից որոշակի օբյեկտներ հարկադրաբար վերցնելուն՝ առանց դրանք փնտրելու: Այսինքն՝ ըստ էության «առգրավում» քննչական գործողությունը ենթադրում է առավել նվազ միջամտություն մարդու բնակարանի անձեռնմխելիության իրավունքի նկատմամբ:

Վերաքննիչ դատարանը հարկ է համարում փաստել, որ թեև ապացուցողական գործողության կատարման և իրականման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդությունների քննության մասով հիմնավոր կասկածը գնահատելու չափանիշները չեն կարող նույնացվել, այնուամենայնիվ դատարանին պետք է ներկայացվեն այնպիսի

փաստական փվյալներ, որոնք կհիմնավորեն այն անձի առնչությունը ենթադրյալ դեպքին, ում սահմանադրական իրավունքը միջնորդում են սահմանափակել:

Հիմք ընդունելով վերոգրյալը և նկատի ունենալով, որ միջնորդությունը հիմնավորված և փաստարկված չէ, քննիչի կողմից ներկայացված միջնորդությամբ բավարար չափով չի ներկայացվել հանցավոր արարքի ենթադրյալ կատարումը հիմնավորող փվյալները, հետևաբար՝ բնակարանի անձեռնմխելիության իրավունքի սահմանափակումն արդարացված չէ, չի բխում միջազգային իրավունքի և ներպետական օրենադրության պահանջներից:

*Վերոշարադրյալի հիման վրա, Վերաքննիչ դատարանը հանգում է այն հետևության, որ Ալինա Յուրիկի Մարտիրոսյանի անվամբ հաշվառված և Զոհրաբ Աղասիի Մխիթարյանի կողմից շահագործվող «Մերսեդես» մակնիշի ** ** *** պետհամարանիշի ավտոմեքենայում խուզարկություն կատարելու թույլտվություն ստանալու մասին ՀՀ ՔԿ ԵՔՔՎ Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնի ՀԿԳ քննիչ Մ.Շահբազյանի միջնորդությունը մերժելով՝ Առաջին ատյանի դատարանը թույլ չի տվել դատական սխալ, այդ թվում նաև՝ քրեադատավարական օրենքի այնպիսի խախտում, որը կարող էր ազդեցություն ունենալ վարույթի ելքի վրա, և գործով կայացրել է ըստ էության ճիշտ լուծող դատական ակտ (...)»*[3]:

9. 2025 թվականի օգոստոսի 18-ին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան է ստացվել թիվ ԵԴ1/3013/01/25 քրեական գործն ըստ մեղադրանքի՝ Զոհրաբ Աղասիի Մխիթարյանի: 2025 թվականի սեպտեմբերի 4-ի դատավճռով Զ.Մխիթարյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 396-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործության կատարման մեջ[4]:

<u>Վճռաբեկ դատարանի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

10. Սույն վարույթով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավորվա՞ծ են արդյոք Զոհրաբ Մխիթարյանի կողմից շահագործվող ավտոմեքենայում խուզարկություն կատարելու թույլտվություն ստանալու միջնորդությունը մերժելու վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները:

---

[3] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 1-ին, թերթեր 34-40:
[4] Տե՛ս www.datalex.am Դատական տեղեկատվական համակարգ, թիվ ԵԴ1/3013/01/25 քրեական գործը:

11. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Խուզարկությունը վարույթի համար նշանակություն ունեցող առարկաներ, նյութեր, փաստաթղթեր կամ փվյալներ, ինչպես նաև քննությունից թաքնվող մեղադրյալին, արգելադրման ենթակա գույքը կամ դիակ հայտնաբերելու նպատակով կատարվող որոնողական գործողություն է»:*

Նույն օրենսգրքի 292-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ապացուցողական գործողություն կատարելու քննիչի միջնորդությունը պարունակում է՝ *«(...) 9) այն փաստարկները, որոնք հիմնավորում են անձի սահմանադրական իրավունքի սահմանափակման անհրաժեշտությունը և համաչափությունը, այդ թվում՝ միջնորդվող ապացուցողական գործողությունից ակնկալվող արդյունքն այլ եղանակով ստանալու ողջամիտ անհնարինությունը (...)»:*

Մեջբերված քրեադատավարական նորմերի համադրված ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ վերաբերելի մասով *(mutatis mutandis)* շարունակում է կիրառելի լինել քրեադատավարական նախկին օրենսդրության շրջանակներում Վճռաբեկ դատարանի նախադեպային որոշմամբ արտահայտված իրավական այն դիրքորոշումը, որի համաձայն՝ խուզարկություն կատարելու թույլտվություն տալու փուլին առաջադրվող հիմնական պահանջներից է դրա կատարման համար փաստական հիմքի առկայությունը: **Փաստական հիմքն այն բավարար տվյալներն են, որոնք հանգեցնում են ողջամիտ ենթադրության առ այն, որ տվյալ բնակարանում կարող են հայտնաբերվել գործի համար նշանակություն ունեցող նյութեր**: Տվյալների բավարարության վերաբերյալ պահանջը որակական բնույթ է կրում. խուզարկության կատարման արդյունքում փնտրվող առարկաների հայտնաբերման հավանականության մասին եզրահանգումը կարող է հիմնված լինել ինչպես մեկ վերաբերելի և արժանահավատ տվյալի, այնպես էլ՝ տվյալների համակցության վրա: **Խուզարկության կատարման փաստական հիմք կարող է հանդես գալ ցանկացած տվյալ, որը հնարավոր է գնահատման ենթարկել,** և որպես այդպիսին, որպես կանոն, կարող են հանդես գալ քրեական վարույթի նյութերում առկա և որոշակի բնակարանում գործի

համար նշանակություն ունեցող որոշակի առարկայի կամ անձի գտնվելու մասին տեղեկություններ պարունակող ապացույցները[5]:

Վերահաստատելով ձևավորված նախադեպային իրավունքը, Վճռաբեկ դատարանը *Քրիստինա Իշխանյանի* գործով ընդգծել է, որ «բավարար տվյալներ» շեմի գնահատման առարկան չի կարող ներառել քրեական գործի ըստ էության քննության ժամանակ ապացույցների գնահատմանը բնորոշ տարրերը. խուզարկության կատարման համար փաստական տվյալների բավարար լինելը պետք է գնահատել քննության տվյալ փուլին բնորոշ առավել ցածր չափանիշով[6]:

Վճռաբեկ դատարանը *Յաշա Խաչատրյանի* գործով կայացված որոշմամբ իրավական դիրքորոշում է հայտնել այն մասին, որ ինչ վերաբերում է այս կամ այն քննչական գործողությունը կատարելու անհրաժեշտությանը, ապա իրավասու սուբյեկտը, ելնելով գործի համար նշանակություն ունեցող պարզման ենթակա հանգամանքներից, համապատասխան քննչական գործողության կատարման փաստական և իրավական հիմքերի առկայությունից, ինքն է որոշում, թե երբ և ինչ քննչական գործողություն է հարկավոր կատարել՝ ապահովելու համար քրեական դատավարության բնականոն շարժը: Ինչ վերաբերում է բնակարանի խուզարկությանը, ապա վարույթն իրականացնող մարմինն իրավասու է նշված քննչական գործողությունը կատարելու թույլտվություն ստանալու միջնորդությամբ դիմել դատարան, եթե գտնում է, որ առկա են բավարար տվյալներ, որոնք հանգեցնում են ողջամիտ ենթադրության առ այն, որ տվյալ բնակարանում կարող են հայտնաբերվել գործի համար նշանակություն ունեցող առարկաներ, փաստաթղթեր, հետախուզվող կամ հանցագործություն կատարելու մեջ կասկածվող անձինք, ինչպես նաև դիակներ[7]:

12. Սույն վարույթի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ.

- Առաջին ատյանի դատարանը մերժել է նախաքննության մարմնի միջնորդությունը՝ Ջ.Մխիթարյանի կողմից շահագործվող «Մերսեդես» մակնիշի ** ** *** պետհամարանիշի ավտոմեքենայում խուզարկություն կատարելու թույլտվություն

---

[5] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Սեպուհ Թադևոսյանի և Սիրուն Նաջարյանի* գործով 2015 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ԵՇԴ/0073/07/15 որոշման 22-23-րդ կետերը:

[6] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Քրիստինա Իշխանյանի* գործով 2023 թվականի հոկտեմբերի 10-ի թիվ ԵԴ/3737/07/21 որոշման 17-րդ և 17.3-րդ կետերը:

[7] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Յաշա Խաչատրյանի* գործով 2020 թվականի հոկտեմբերի 28-ի թիվ ԵԴ/3084/07/19 որոշման 14.1-րդ կետը:

ստանալու վերաբերյալ, նշելով, որ միջնորդությանը կից ներկայացված նյութերը բավարար փաստական տվյալներ չեն պարունակում անձի բնակարանում/ավտոմեքենայում խուզարկություն կատարելու միջնորդությունը հիմնավոր համարելու համար:

Մասնավորապես, Առաջին ատյանի դատարանն արձանագրել է, որ որևէ տվյալ չի ներկայացվել անձանց մոտից ենթադրյալ թմրամիջոցների չափի, տեսակի, և ըստ այդմ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 396-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ենթադրյալ հանցավոր արարքին Զ.Մխիթարյանի առնչության վերաբերյալ, և միջնորդությամբ և կից նյութերով առկա չէ գեթ մեկ տվյալ, որը հնարավորություն կտար ենթադրություն կատարել թմրամիջոցների ապօրինի իրացման հանգամանքի վերաբերյալ: Բացի այդ, Առաջին ատյանի դատարանը նշել է, որ վարույթն իրականացնող մարմինը զրկված չէ ավտոմեքենայի ուղևորի նստատեղի դիմաց տեսանելի վայրում առկա պոլիէթիլենային տոպրակը՝ լցված դեղնականաչավուն զանգվածով, առգրավելու և համապատասխան վարութային գործողությունների արդյունքում դրա թմրամիջոց հանդիսանալու հանգամանքը, թմրամիջոցի տեսակը պարզելու և ըստ այդմ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 396–րդ հոդվածի 1–ին մասով նախատեսված ենթադրյալ հանցավոր արարքին Զ.Մխիթարյանի առնչակցության վերաբերյալ փաստական տվյալ ստանալուց հետո, նոր միայն միջնորդություն ներկայացնելու դատարան[8]:

- Վերաքննիչ դատարանն անփոփոխ է թողել Առաջին ատյանի դատարանի դատական ակտը՝ արձանագրելով, որ բավարար փաստական տվյալներ չեն ներկայացվել քրեական պատասխանատվություն նախատեսող ենթադրյալ արարքների առկայության վերաբերյալ, իսկ հնարավոր վարչական իրավախախտման բացահայտման նպատակով քրեադատավարական գործիքակազմի օգտագործումն անթույլատրելի է[9]:

13. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 11-րդ կետում շարադրված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Զոհրաբ Մխիթարյանի կողմից շահագործվող ավտոմեքենայում խուզարկություն կատարելու թույլտվություն ստանալու

[8] Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:
[9] Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

միջնորդությունը մերժելիս, ստորադաս դատարանները պատշաճ իրավական գնահատման չեն ենթարկել մի շարք հանգամանքներ: Մասնավորապես, նախաքննության մարմնի կողմից որպես միջնորդության փաստական հիմք վկայակոչվել է հետևյալը՝

- 2025 թվականի հունվարի 26-ին, պարեկային ծառայողները, ժամը 22:55-ի սահմաններում, Երևան քաղաքի Թամանցիների փողոցում կանգնեցրել են «Մերսեդես» մակնիշի ** ** *** հ/հ ավտոմեքենան, և մոտենալով մեքենային, նկատել են, որ մեքենայի ուղևորի նստատեղի դիմաց տեսանելի վայրում առկա է պոլիէթիլենային տոպրակ՝ լցված դեղնականաչավուն զանգվածով, որից հետո ժամը 23:00-ին, նշված ավտոմեքենայով հանդերձ, ապօրինի թմրանյութ ձեռք բերելու, պահելու և օգտագործելու հիմնավոր կասկածի առկայության հիմքով ձերբակալել և ոստիկանության Շենգավիթի բաժին են տեղափոխել վարորդին և ուղևորին՝ Զոհրաբ և Արա Մխիթարյաններին[10]:

- Զոհրաբ Մխիթարյանը ոստիկանության Շենգավիթի բաժնում հայտարարել է, որ իր կողմից շահագործվող հիշյալ ավտոմեքենայի մեջ առկա դեղնականաչավուն զանգվածը «Մարիխուանա» տեսակի թմրամիջոց է, որը գտել է Գյումրի-Երևան մայրուղուց՝ հետագայում գցելու նպատակով[11]:

Վերոգրյալի հաշվառմամբ, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ իրենց լիազորությունների շրջանակներում պարեկային ծառայության աշխատակիցների հաղորդմամբ ներկայացված տեղեկությունները հնարավոր էր գնահատման ենթարկել, հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ տեսանելի հատվածում առկա զանգվածի թմրամիջոց հանդիսանալու հանգամանքը հաստատել է նաև տվյալ ավտոմեքենան շահագործող Զ.Մխիթարյանը:

Անդրադառնալով ստորադաս դատարանների հետևություններին տվյալ դեպքում առգրավում կատարելու հնարավորության վերաբերյալ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վարույթի նյութերում առկա վերը նշված փաստական տվյալները բավարար էին ողջամիտ ենթադրություն անելու, որ խուզարկության արդյունքում կարող են

[10] Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը, վարույթի նյութեր, հատոր 1-ին, թերթ 9:
[11] Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը, վարույթի նյութեր, հատոր 1-ին, թերթ 11:

հայտնաբերվել նաև գործի համար նշանակություն ունեցող և միջնորդության մեջ նշված այլ նյութեր կամ առարկաներ:

Միևնույն ժամանակ, Վճռաբեկ դատարանը հիմնավոր չի համարում Վերաքննիչ դատարանի այն դատողությունը, որ բավարար փաստական տվյալներ չեն ներկայացվել քրեական պատասխանատվություն նախատեսող ենթադրյալ արարքների առկայության վերաբերյալ, իսկ հնարավոր վարչական իրավախախտման բացահայտման նպատակով քրեադատավարական գործիքակազմի օգտագործումն անթույլատրելի է, նկատի ունենալով, որ միջնորդության հարուցման պահի դրությամբ ենթադրյալ թմրամիջոցի ոչ տեսակը, ոչ էլ քաշը պարզված չեն եղել:

14. Հետևաբար, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանների հետևությունները, Զոհրաբ Մխիթարյանի կողմից շահագործվող ավտոմեքենայում խուզարկություն կատարելու թույլտվություն ստանալու միջնորդությունը մերժելու վերաբերյալ, հիմնավորված չեն:

15. Ելնելով վերոգրյալից, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանները, սույն վարույթով դատական ակտ կայացնելիս, թույլ են տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածով նախատեսված հանրայնության սկզբունքի խախտում, ինչը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 362-րդ հոդվածի համաձայն՝ քրեադատավարական օրենքի էական խախտում է և հիմք է ստորադաս դատարանների դատական ակտերը բեկանելու համար: Սակայն, հաշվի առնելով, որ սույն գործով նախաքննությունն ավարտվել է, և Զ.Մխիթարյանի վերաբերյալ քրեական գործն ըստ էության քննության առնելու համար ուղարկվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան, որով կայացվել է դատավճիռ[12], Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու իրավական հնարավորությունը բացակայում է: Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի՝ 2025 թվականի մարտի 6-ի որոշումը պետք է թողնել անփոփոխ՝ հիմք ընդունելով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ և 171-րդ հոդվածներով, Հայաստանի

[12] Տե՛ս սույն որոշման 9-րդ կետը:

Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ, 33-րդ, 34-րդ, 264-րդ, 281-րդ, 352-րդ, 359-րդ, 361-363-րդ և 400-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

Ջոհրաբ Աղասիի Մխիթարյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2025 թվականի մարտի 6-ի որոշումը թողնել անփոփոխ՝ հիմք ընդունելով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացնելու օրը:

Նախագահող՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆ

Դատավորներ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆ

Հ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

Ա.ԴԱՆԻԵԼՅԱՆ

Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Ա.ՊՈՂՈՍՅԱՆ